GABRIELYAN GUZH
3901890254
Digitally signed by GABRIELYAN GUZH 3901890254
Date: 2022.10.19 02:21:24 +04'00'

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՉԻՆՉԻՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ 1_ԻՆ և 2_ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ

ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

2022_2023 ՈՒՍՏԱՐԻ

ԴԱՍՂԵԿ՝Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Կրթադաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները 1.Ներածություն(դասարանիընդհանուր բնութագիրը):

Առաջին դասարանում սովորում են 6 աշակերտ՝ 4 տղա, 2 աղջիկ: Երեխաները դեռևս չեն հարմարվել դպրոցական կարգ ու կանոնին, որպես աշակերտ կայացած չեն:

II(երկրորդ)դասարանումսովորումեն 4աշակերտ, 3-ը՝աղջիկ, 1-ը՝ տղա:Բոլորն էլ ուշադիր, խելոք, կարգապահ երեխաներ են:Ստեղծվել է համերաշխ կոլեկտիվ, ձևավորվել է պատասխանատվության մեծ զգացում:Դպրոցական օրվա բնականոն ընթացքը հագեցված է այնպիսի իրավիճակներով,երբ աշակերտները ուսուցչի ուղղորդմամբ հնարավորություն ունեն բավականին շատ հմտություններ և կարողություններ ձևավորել:

2.Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում:

* Աշակերտներին ծանոթացնել վարքի կանոններին

* Կանխել ուշացումներն ու բացակայությունները:

* Դաստիարակել բարեկիրթ ու հանդուրժողական վերաբերմունք ուսուցիչների, մեծահասակների և միմյանց նկատմամբ:

* Ստեղծել կայուն և համերաշխ կոլեկտիվ:

* Նպաստել փոխադարձ օգնության, համագործակցային և հանդրուժող միջավայրի ձևավորմանը:

*Էքսկուսիաների ու այցելությունների միջոցով ծանոթացումը ազգային-ավանդական արժեքներին:

*Ստեղծել ծնող-ուսուցիչ-աշակերտ փոխադարձ կապը:

3.(**1**) Հայեցի դաստիարակություն:

Հոգևոր դաստիարակություն: Աշակերտներին տալ հոգևոր դաստիարակություն: Պահել և պահպանել մայրենի լեզուն,ազգային սովորույթներն ու հոգևոր արժեքները, կրոն ն ու եկեղեցին ,որը հայապահպանության հիմքն է: Զանազան զրույցների միջոցով դաստիարակել սեր ու նվիրվածություն հայրենիքի նկատմամբ:

3(2)Գեղագիտական դաստիարակություն: Անձի լիարժեք ձևավորման համար շատ կարևոր նշանակություն ունի նաև գեղագիտական դաստիարակությունը:
Երեխաների մեջ վերհանել գեղեցիկն ընկալելն ու գնահատելը:Կազմակերպել այցելություն մշակութային օջախներ:

3(3)Ֆիզիկական դաստիարակություն:Ձևավորել անվերապահ խնամք և հոգատար վերաբերմունք սեփական անձի՝մարմնի ու կեցվածքի նկատմամբ: Զարգացնել կամային հատկանիշներ՝ կամք, նպատակասլացություն, հետևել անձնական հիգիենային:

3(4)Աշխատանքային դաստիարակություն: Աշակերտների մեջ սեր և եռանդ սերմանել աշխատանքի կատմամբ: Մասնակցել դպրոցական շաբաթօրյակներին: Արժեքավորել աշխատանքով ստեղծածը:Սովորեցնել գնահատել սեփական ու այլոց աշխատանքը:

3(5)Բնապահպանական դաստիարակություն:Երեխաներին բացատրել մեզ շրջապատող բնության դերն ու նշանակությունը մարդու կյանքում,որը կմղի նրանց բնության պահպանմանը և ճիշտ օգտագործմանը:
Խնամել շրջակայքի ծառերը և մասնակցել ծառատունկին:

3(6)Դպրոց-Ընտանիք կապը օգնում է երեխայի լիարժեք զարգացմանը, որի համար էլ ստեղծում ենք ծնողական կոմիտե:
Հրավիրել ծնողական ժողովներ և ծնողներին մասնակից դարձնել կազմակերպվող միջոցառումներին, էքսկուրսիաներին և Եկմալյանի «Հայր մեր» երաժշտ.՝ Կոմիտասի այցելություններին:

Ուսում նակա ն շաբաթ ներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	ժամ	կատարող ներ
1. 06-09- 2022թ	Զրույց՝<<Աշակերտի կարգապահական կանոնները>>: Զրույց՝ <<Օրվա ռեժիմի մասին>>:	1	Դասվար, աշակեր տներ
2. 13-09 20-09	Զրույց՝<<Հայաստանը մեր տունն է>>: <<Օգնության ձեռքեր>>:	2	Դասվար, աշակեր տներ
3. 20-09 27-09 04-10	Զրույց՝<<Պահպանել անվտանգության կանոնները>>: <<Լինենք առողջ հետևենք կարգապահականկանոններին>>: <<Չվտանգենք մյուսների առողջությունը>>:	3	դասվար
4. 11-10	Զրույց՝<<Ես արդեն դպրոց եմ հաճախում>>: <<Իմ ուսուցչուհին>>:	1	աշակեր տներ
5. 18-10 01-11	Զրույց՝<<Կյանքի ոստայնը>>: <<Սովորենք խնայել>>:	2	դասավար
6. 08-11 15-11	Զրույց՝<<Ձմեռը մեզ մոտ>>: <<Ինչպես օգնենք թռչուններին>>:	2	
7. 22-11 29-11	Զրույց՝ նվիրված հայոց բանակին: Զրույց՝ նվիրված մեր հերոսներին:	2	
8. 06-12 13-12	Զրույց <<Հնարամիտ լուծումներ>>: <<Ընտրել լավագույնը>>:	2	
9. 20-12 10-01- 2023թ	Զրույց <<Հրաժեշտ վիրավորանքներին>>: <<Հույզերը և խոսքը>>:	2	
10. 17-01 24-01	Զրույց<<Իմ զինվորը>>վերնագրով: <<Ինչպես եմ օգնում ծնողներիս>>:	2	
11. 31-01 07-02	Աշխատանքների ցուցադրություն՝ <<Ձմեռային նկարներ >>: Ցուցադրություն՝ <<Իմ լավագույն աշխատանքը>>:	2	
12. 14-01 21-02	Զրույց՝ <<Հիշենք և պահանջենք>>:	2	

13. 28-02 07-03	Զրույց՝ <<Մեր իրավունքներն ու պարտականությունները>>: <<Ի՞նչն է լավ, ի՞նչն է վատ>>:	2	
14. 14-03 21-03	Զրույց<<Իսկական ասպետ, բարեկիրթ տղաներ>>: <<Մեր քաղաքակիրթ դասարանը>>:	2	
15. 04-04	Աշխատանքների ցուցադրություն՝ <<Գարնանային ժպիտներ>>:	1	
16. 11-04 18-04	Զրույց <<Մայրության և գեղեցկության մասին >>: <<Ուսման առաջադիմության նկարգապահության մասին>>:	2	
17. 25-04 02-05	Զրույց <<Սիրենք և պահպանենք բնությունը>>: <<Մաքուր պահենք մեր շրջապատը>>:	2	
18. 16-05 23-05	Զրույց <<Կիսամյակային ամփոփում>>, << Ինչպես անցկացնել ամառային արձակուրդը>>:	2	